

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Ս. Էջմիածնի Սինոդին տալ եղբայրական օգնութեան Մայր Աթոռի Յանձնաժողովին երեք հազար ուրբլի գողթականաց գումարից և ուղարկել Երևանի Յանձնաժողովին երգուեալ հաւատարմատար Գրիգոր Տէր-Սաչատրեանին երեք հազար ուրբլի: 29 դեկտեմբերի, թ. 1991:

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկելով Եղբայրական օգնութեան Մայր Աթոռի կարգադիր Յանձնաժողովի անունով տուած թ. 1990 Կոնդակի պատճէնը՝ յանձնարարուեց տալ այդ Յանձնաժողովին ժապաւինեալ մտից և ելից մատեան՝ ստացուած և ծախսուած գումարները մուտք գրելու համար: 29 դեկտեմբերի, թ. 1993:

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒՍՏՐՈՒԹԻՎՆԵՐԻՑ

Կոնդակ Տիխիսի Սարգիս քահանայ Իփակեանի անունով, որով, Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդի և գիմնագիծնի վերատեսչի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց: 15 դեկտեմբերի, թ. 1939:

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒՈՇՆԵՐ.

Սինոդը լսելով Վեհափառ Հայրապետի մակագրական պատուէրը. «Պատուիրում ենք Ս. Էջմիածնի Սինոդին աւելացնել Մ. Աթոռի Գ. Ճեմարանի նախահաշուին (1914/13 ուսումն. տարուայ) մի հարիւր յիսուն ուրբլի օտարահպատակ աշակերտների հետ ուսերէն պարապելու համար.», որուեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին աւելացնել Ճեմարանի 1914/13 ուսումն. տարուայ նախահաշուին ևս հարիւր յիսուն ուրբլի օտարահպատակ աշակերտների հետ ուսերէն պարապելու համար: 5 դեկտ. թ. 596:

Սինոդը լսելով Աստրախանի Կոնսիստորիայի յայտարարութիւնը 11 նոյեմբերի թ. 3763, որոշեց. թոյլ տալ Մերվի ծխականներին ծախսել աղօթատան բարեգարդութեան համար համաձայն կազմած նախահաշուի ութ հարիւր (800) ռուբլի, որի համար հրաման տալ Մերվի ծխականներին Կոնսիստորիայի միջոցով, վերադարձնելով ծխական ժողովի արձանագրութիւնն և նախահաշիւը: դեկտ. թ. 600:

Սինոդը լսելով Գանձակի նահանգապետի հոկտ. 12-ի թ. 28381 գրութիւնը և Շուշի քաղաքի վերաբնակչուհի օրթոդոքս Յուսաինէ Միխայլովնայի խնդիրը, որոշեց. պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային կարգադրել ընդունել Յուսաինէ Միխայլովնային Հայ Լուսաւորչական եկեղեցու ծոցը և ընդունելութեան օրուայ մասին տեղեկութիւն տալ Գանձակի նահանգապետին: 5 դեկտ. թ. 601:

Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի յայտարարութիւնը 7 նոյեմբ. թ. 5787, որոշեց. Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջնորդութիւնը Խաչատուր Փահլևանեանին Խոթոռնի գիւղի համար քահանայ ձեռնադրելու վերաբերմամբ թողնել առանց հետեանքի, որի մասին յայտնել Կոնսիստորիային, վերադարձնելով Փահլևանեանի վկայականները՝ յանձնելու ըստ պատկանելոյն: 5 դեկտ. թ. 603:

Սինոդը լսելով Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1914 թ. Մայիս 13-ի յայտարարութիւնը. որոշեց. Սիմէօն Տէր-Առաքելեանին ընդունել հոգևոր կոչման մէջ և պատուիրել Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդին ձեռնադրել նորան քահանայ Ղարաղաղու գիւղի ծխականների համար: Ընծայացուի վկայականները վերադարձնել Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի միջոցով: 5 դեկտ. թ. 604:

Սինոդը ստանալով թեմերից 1913 թ. տեղեկագիրը. որոշեց. օր. XI հատ. I մ. 1141 յօդ. 17 կ. հիման վրայ Երևանի, Շամախու, Ղարաբաղի և Վրաստանի Հայոց թեմերի 1913 թ. տեղեկագրերը, երկ-երկու օրինակ, ներ-

կայացնել Կովկասի Փոխարքայի ղեւանատունը, իսկ Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի և Աստրախանի թեմերի տեղեկազրբերը ներկայացնել Հոգևոր գործերի գեպարտամենտին: 10 դեկտ. թ. 620:

Սինոզը լսելով Երևանի գաւառի Փարաքար պիւղի վերաբնակչուհի հրէուհի Մարկա Վոլֆովնա Կուզրիցի 1914 թ. դեկտ. 7-ի խնդիրը, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային մկրտել Հայ եկեղեցու ծիսով Փարաքարի վերաբնակչուհի հրէուհի Մարկա Կուզրիցին, պահպանելով XI հատ. 1 մ. 7 յօդ յաւելուածի պահանջները: Այս մասին յայտնել Կովկասի Տ. Փոխարքային ի գիտութիւն:

Սինոզը լսելով Վեհափառ Հայրապետի մակազրական պատուէրը, որոշեց. «Փարիզի Հայկական Միութեան» 295 ո. 2400 ֆրանկի տոկոսները իւրաքանչիւր տարի, այլ և Նոր Նախիջևանի Հայոց աղքատախնամ Հոգաբարձութիւնից երկու սանի 1913/14 ուս. տարուայ թոշակը 250 ո. Նոր Նախիջևանի Հայոց Հոգևոր կառավարութիւնից ստացած 27 ո. և Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքի արդիւնքներից 500 ո. մտցնել Ճեմարանի գումարների ցուցակը և հետզհետէ համաձայն նախահաշուի յանձնել Ճեմարանի վարչութեան: 19 դեկտ. թ. 628:

